“IT Chess Cup”

ԱՐԱԳ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐ

ՏՏ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

1. **Կազմակերպիչ**
   Հայաստանի շախմատի ակադեմիա

2. **Մրցաշարի աջակից**
   Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն,
   FinTech Armenia

3. **Մասնակցություն**
   Մրցաշարին կարող են մասնակցել Հայաստանում գործունեություն ծավալող և պետական ռեգիստրում գրանցված բոլոր ՏՏ, ինչպես նաև ՏՏ բաժիններ ունեցող կազմակերպությունները՝ բացառությամբ մասնագիտացված շախմատային գործունեությամբ զբաղվող ընկերությունների:
   Վարկանիշային սահմանափակում չկա:
   Գավաթի մրցանակը ամենամյա փոխանցիկ գավաթ է:
   1-3-րդ տեղեր գրավող թիմերը կպարգևատրվեն մրցանակներով, դիպլոմներով և մեդալներով:

4. **Մրցանակներ**

Հիմնական մրցանակներ	**I**	**Հանգիստ Հայաստանի հանգստյան վայրերից մեկում /2 գիշեր/**
	II	**Հանգիստ Հայաստանի հանգստյան վայրերից մեկում /1 գիշեր/**
	III	**Հայաստանի ժամանցի վայրերից մեկի սերտիֆիկատ**
Հատուկ մրցանակներ. լավագույն արդյունք ցույց տված մասնակից	1-ին,2-րդ,3-րդ, խաղատախտակ /առնվազն 5 խաղ խաղալու դեպքում/	**Նվեր քարտ**
	Կին մասնակից /առնվազն 4 խաղ խաղալու դեպքում/	**Կոսմետիկ փաթեթ**

***Հաղթող թիմի համար սահմանված է հատուկ մրցանակ Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության կողմից:**

5. **Ժամանակացույց**

Մրցաշարը տեղի կունենա սեպտեմբերի 13-ին:

1-ին տուր	12:00
2-րդ տուր	12:30
3-րդ տուր	13:00
4-րդ տուր	13:30

5-րդ տուր	14:00
6-րդ տուր	14:30
7-րդ տուր	15:00
Փակման արարողություն	16:00

6. **Մրցակարգ**

- Մրցաշարը կանցկացվի շվեյցարական թիմային համակարգով՝ 3 խաղատախտակով, 6 կամ 7 խաղափուլով: Կազմակերպությունները կարող են ունենալ 1-ից ավելի թիմեր:
- Մրցաշարը կանցկացվի ըստ ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների:
- Յուրաքանչյուր մրցախաղում թիմային հաղթանակը գնահատվում է **2 միավոր, ոչ-ոքին՝ 1 միավոր, պարտությունը՝ 0 միավոր:** Մրցանակների հավակնող թիմերի միավորների հավասարության դեպքում հաշվի է առնվում թիմի անդամների անհատական արդյունքների հանրագումարը, թիմերի միջև անհատական հանդիպման արդյունքը, ըստ խաղատախտակների վրա ցույց տված արդյունքի (1, 2, 3 խաղատախտակներ): Եթե այդ ցուցանիշն էլ է հավասար, ապա անցկացվում է լրացուցիչ մրցախաղ՝ «կայծակնային խաղի» կանոններով յուրաքանչյուր խաղացողին տրվում է **5-ական րոպե**:

7. **Ժամակարգ**

   10 րոպե մինչև պարտիայի ավարտը (2 վայրկյան հավելումով՝ յուրաքանչյուր քայլին, սկսած առաջին քայլից):

8. **Մասնակցության վճար**

   Մրցաշարի մասնակցության վճարը յուրաքանչյուր թիմի համար կազմում է 80 000 ՀՀ դրամ:
   Այն ընկերությունները, որոնք կներկայանան երկու կամ ավելի թիմերով, կստանան հավելյալ **20% զեղչ**:
   Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության անդամ կազմակերպությունները կստանման հավելյալ **10% զեղչ**:

   Հաշիվ դուրս գրելու համար խնդրում ենք **info@chessacademy.am** էլ. հասցեին ուղարկել Ձեր բանկային տվյալները:
   Փոխանցումները անհրաժեշտ է կատարել հետևյալ բանկային հաշվին՝

   Ծահառու՝ Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ
   Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
   Հ/հ՝ 1570018417800100
   ՀՎՀՀ՝ 02560522

   Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել կազմակերպության անունը, կոնտակտային հեռախոսահամար, մասնակցության վճար:

9. **Գրանցում**

   Հայտեր ներկայացնելու վերջնաժամկետն է **2025 թ-ի սեպտեմբերի 10-ը, ժամը՝ 18:00:**
   Գրանցվել կարող եք հայտը ուղարկելով **info@chessacademy.am** էլ. փոստին:

10. **Անցկացման վայր**

    Մրցաշարը կանցկացվի Հայաստանի շախմատի ակադեմիայում (ք. Երևան, Շևչենկո 34):

11. **Կոնտակտային տվյալներ**

    Հեռ՝ +374 10 448473, +374 43 448473, էլ. փոստ՝ **info@chessacademy.am**